Հավելված՝
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Գյումրի համայնքի
ավագանու 2024 թվականի մարտի 15-ի
N 40-Ա որոշման

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2023 ԹՎԱԿԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2023 թվականի տարեկան աշխատանքային պլանի իրականացման վերաբերյալ տարեկան հաշվետվությունը կազմվել է համայնքի ղեկավարին կից գործող համայնքի հնգամյա զարգացման ծրագրի և բյուջեի կառավարման գծով խորհրդակցական մարմնի և համայնքի աշխատակազմի կողմից իրականացված ոլորտային ծրագրերի մոնիթորինգի արդյունքում:

Գյումրի համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության թափանցիկությունը ապահովելու, ինչպես նաև կատարվող աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով Գյումրի համայնքի 2023 թվականի տարեկան աշխատանքային պլանով ներառված ծրագրերի մոնիթորինգի և գնահատման աշխատանքներին ներգրավվել են ավագանու անդամներ և շահագրգիռ այլ անձինք:

2. ՄՈՆԻԹՈՐԻՆԳ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Մոնիթորինգի նպատակը ոլորտային ծրագրերով նախատեսված միջոցառումների իրականացման ժամկետները, որակը և ծավալները, դրանց տեխնիկական առաջադրանքների և նախահաշիվների պահանջներին համապատասխան իրականացնելն է և ընթացքում բացահայտված շեղումները վերանայելը կամ, ավելի բարդ դեպքերում՝ ծրագրային փաստաթղթերը վերանայելու և դրանցում փոփոխություններ ու լրացումներ կատարելու վերաբերյալ ՏԻՄ-երին առաջարկություններ ներկայացնելը:

Մոնիթորինգը և գնահատումն իրականացվել է ՏԱՊ-ի ֆինանսավորման պլանով և մոնիթորինգի անձնագրով սահմանված ցուցանիշների վերաբերյալ տվյալների հավաքագրման, դրանց փաստացի արժեքները հաշվարկելու ելակետային ու թիրախային արժեքների հետ դրանք համեմատելու միջոցով: Ցուցանիշների արժեքների շեղումները կամ դրանց պատճառները մեկնաբանված են Հավելված 2-ի «Ցուցանիշի շեղման մեկնաբանություն» սյունակում:

3. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Համայնքի հնգամյա զարգացման ծրագրի կատարման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով համայնքի ավագանուն ներկայացվել է 2023 թվականի «Համայնքի տարեկան աշխատանքային պլան»-ը (ՏԱՊ):

Տարեկան պլանավորումը հնարավորություն է տվել ի մի բերել տարբեր աղբյուրներից (համայնքի և պետական բյուջեներ, սփյուռք, դոնոր, միջազգային, հասարակական կազմակերպություններ, ձեռներեցներ, բարերարներ, միջհամայնքային ծրագրեր և այլն) ֆինանսավորվող ծրագրերն ու միջոցառումները: Ինչպես նաև արձանագրել շեղումները և դրանց պատճառները: ՏԱՊ-ի իրականացման մոնիթորինգի և գնահատման տարեկան հաշվետվությունը հնարավորություն է ստեղծում հետագա ծրագրերում փոփոխություններ և շտկումներ իրականացնելու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

Աղյուսակ 1

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

2023 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՊԱՐՏԱԴԻՐ ԽՆԴԻՐ	2023Թ. ՆԱԽԱՏԵՍՎԱԾ (ՀԱՀ. ԴՐԱՄ)	ՈՐԻՑ		2023Թ. ՓԱՍՏԱՑԻ (ՀԱՀ. ԴՐԱՄ)	ՈՐԻՑ	
		ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵ	ԱՅԼ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ		ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵ	ԱՅԼ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ
1. Գործարար միջավայրի բարելավում և ձեռնարկատիրության խթանում	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
2. Համայնքի գույքի կառավարում	122068.2	122068.2	0.0	200711.2	200711.2	0.0
3. Նախադպրոցական կրթություն և արտադպրոցական դաստիարակություն	1889847.9	45352.0	1844495.9	1822825.9	38973.6	1783852.3
4. Համայնքի մշակութային կյանքի կազմակերպում	768249.5	54777.5	713472.0	146737.2	35969.6	110767.6
5. Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանություն	66710.0	66710.0	0	34047.6	34047.6	0.0
6. Համայնքում մարզական կյանքի կազմակերպում, ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսում	97226.0	97226.0	0	142948.8	142948.8	0.0
7. Համայնքում բնակարանային շինարարության խթանում	600000.0	0.0	600000.0	0.0	0.0	0.0

8. Համայնքի բնակավայրերի կառուցապատում, բարեկարգում և կանաչապատում, համայնքի աղբահանություն և սանիտարական մաքրում, կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովվում, ինչպես նաև համայնքային գերեզմանատների պահպանում և գործունեության ապահովվում	5119851.4	2076851.4	3043000.0	2565543.1	1133086.1	1432457.0
9. Համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպում, համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանություն և շահագործում	2215693.6	2106490.6	109203.0	2396905.3	2168583.2	228322.1
10. Աջակցություն պետական պաշտպանության իրականացմանը	2400.0	2400.0	0.0	260.0	260.0	0.0
11. Աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների կազմակերպում և իրականացում	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
12. Համայնքում գյուղատնտեսության զարգացման խթանում	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
13. Շրջակա միջավայրի պահպանություն	143067.8	52465.0	90602.8	145121.3	49136.6	95984.7
14. Համայնքնում զբոսաշրջության զարգացման խթանում	1149500.0	39500.0	1110000.0	1683551.4	18551.4	1665000.0
15. Համայնքի երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների կազմակերպում	48960.0	48960.0	0.0	9463.9	9463.9	0.0
16.Համայնքում ծնելիության և բազմազավակության խթանում	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
17. Համայնքում բնակչության առողջության պահպանման և բարելավվման ծրագրերի իրականացում, արդյունավետ և մատչելի առաջնային բժշկական սպասարկման պայմանների ստեղծում	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
18. Համայնքի հասարակական կյանքին հաշմանդամների մասնակցության խթանում	240.0	240.0	0.0	240.0	240.0	0.0
19. Բարեգործության խթանում	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0

Աղյուսակ 2

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

2023 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ՆԵՐԱՌՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ՄՈԴԵԼԻ ԲԱՂԱԴՐԻՉ	ՑՈՒՑԱՆԻՇԻ ԹԻՐԱԽԱՅԻՆ ԱՐԺԵՔ (2023)	ՑՈՒՑԱՆԻՇԻ ՓԱՍՏԱՑԻ ԱՐԺԵՔ (2023)	ՑՈՒՑԱՆԻՇԻ ՓԱՍՏԱՑԻ ՇԵՂՈՒՄ (2023)	ՑՈՒՑԱՆԻՇԻ ՇԵՂՄԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ				
Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների հարաբերությունը համայնքի ընտանիքների ընդհանուր թվին՝ արտահայտված տոկոսով	1	-	-	ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից աղքատության մակարդակի մասին ցուցանիշը հրապարակվում է ՀՀ մարզերի արդյունքներով: Հիմք ՀՀ վիճակագրական կոմիտեի գրությունը:
Համայնքի վարչական մասի սեփական եկամուտների տարեկան աճ՝ արտահայտված տոկոսով	5.2	20	+14.8	Պայմանավորված է անշարժ գույքի դրույքաչափի ավելացումով, փոխադրարիջոցների քանակի ավելացմամբ, գույքահարկի մուտքերի ավելացումով և այլ սեփական եկամուտների աճով:
Համայնքի գրանցված բնակիչների թվի փոփոխությունը նախորդ տարվա համեմատ՝ արտահայտված տոկոսով, չհաշված համայնքի բնակչության փոփոխությունը բնական աճի պատճառով	0.1	0.2	+0.1	ՀՀ վիճակագրական կոմիտեի Շիրակի մարզային վարչության և Արմստատ կայքի տվյալներից ելնելով:
ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ ԵՎ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՈՒՄ				
Համայնքում արտադրական, հասարակական, սննդի և սպասարկման ոլորտում ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող սուբյեկտների թիվը	585	579	-6	Շեղումը ստանդարտ է և պայմանավորված է ԱՁ-ների և իրավաբանական անձանց գործունեության և՛ դադարեցումով, և՛ նորերի բացմամբ:
ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ				

Նախադպրոցական հաստատություններում ընդգրկված երեխաների թվաքանակի հարաբերությունը համայնքի նախադպրոցական տարիքի երեխաների ընդհանուր թվին՝ արտահայտված տոկոսով	35	42	+7	Արցախից տեղահանված բնակչության և ծնողական վարձավճարների զեղչերի հետ կապված:
Ծնողների բավարարվածությունը նախադպրոցական կրթությունից	լավ	լավ		
«Զանգակ» ՀՈԱԿ-ի շենքի կառուցման իրականացում (կատարված աշխատանքի ծավալը՝ արտահայտված տոկոսով)	100	90	-10	Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամի կողմից շինարարական աշխատանքների ձգձգում:
Մանկապարտեզների շենքերի ընթացիկ նորոգում, գույքի ձեռքբերում (ֆինանսավորումը՝ արտահայտված հազար ՀՀ դրամով)	7.500.000	11.670.000	+4.170.000	Նախադպրոցական ուսումնական հաստատություններում շենքերի ընթացիկ նորոգում, գույքի ձեռքբերում (համակարգիչների և տպիչների տրամադրում):
Մանկապարտեզներում ծնողական վարձավճարների զեղչերից օգտվող երեխաների թվի հարաբերությունը մանկապարտեզ հաճախող երեխաների ընդհանուր թվին՝ արտահայտված տոկոսով	20	83	+63	Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամի կողմից շինարարական աշխատանքների ձգձգում:
ՀԱՄԱՅՆՔԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ				
Համայնքապետարանի կողմից կազմակերպված մշակութային միջոցառումների թիվ	40	65	+25	Այլ համայնքների և կազմակերպությունների հետ համագործակցության շնորհիվ
Համայնքում գործող մշակութային խմբակների թիվ	22	22	0	
Մշակութային խմբակներում ընդգրկված երեխաների, ու պատանիների թվի հարաբերությունը համայնքի երեխաների ու պատանիների թվին՝ արտահայտված տոկոսով	2,96	2.96	0	
Ծնողների բավարարվածությունը մշակութային խմբակներից	լավ	լավ		
Համայնքապետարանի միջոցներով կազմակերպված երեխաների ու պատանիների այցելություններ համայնքից դուրս մշակութային օջախներ	7	10	+3	Հրավերներ, համագործակցություններ, մասնակցություն պետական ծրագրերին:

Համայնքային գրադարանի (ներառյալ էլեկտրոնային գրադարանի) առկայություն	5	5	0	
Համերգների, փառատոնների կազմակերպում (համայնքապետարանի կողմից կազմակերպված միջոցառումների թիվ)	5	20	+15	Նոր համագործակցությունների, փառատոնների, համերգների անցկացում՝ մասնակից կողմերի աջակցությամբ, ձեռք բերված համագործակցությունների շրջանակում
«Ասլամազյան քույրերի պատկերասրահ»-ի պատշգամբի վերանորոգում (կատարված աշխատանքի ծավալը՝ արտահայտված տոկոսով)	50	50	0	Աշխատանքները ավարտվել են:
Համայնքապատկան թանգարանների էքսպոզիցիայի փոփոխություն/թանգարանների թիվ/	1	0	-1	Դրամաշնորհային ծրագրի շրջանակում իրականացվող աշխատանքներում սահմանված ժամկետների տեղաշարժ
Մշակութային ֆոնդերի հավաքագրում և կատալոգների տպագրում (կատարված աշխատանքի ծավալը՝ արտահայտված տոկոսով)	20	20	0	
ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ				
Անապահով ընտանիքներին սոցիալական աջակցության իրականացում (աջակցություն ստացող ընտանիքների թիվ)	1900	590	-1310	Փաստացի դիմումների և հանձնաժողովների աշխատանքների արդյունքում
ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՄԱՐԶԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ, ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ԱՌՈՂՋ ԱՊՐԵԼԱԿԵՐՊԻ ԽՐԱԽՈՒՍՈՒՄ				
Համայնքապետարանի օժանդակությամբ համայնքում գործող մարզական խմբակների թիվ	378	334	–44	Մարզիկների որակավորման բարձացման պատճառով,խմբերի քանակը նվազում է,մարզիչների ժամերը շատանում:
Համայնքապետարանի միջոցներով համայնքում կազմակերպված մարզական միջոցառումների թիվ	160	226	+66	Համայնքի միջոցներով կազմակերպված միջոցառումների 75–ը Գյումրի համայնքում է տեղի ունեցել, 151–ը համայնքից դուրս:
Մարզական խմբակներում ընդգրկված երեխաների ու պատանիների թվի հարաբերությունը համայնքի երեխաների ու պատանիների ընդհանուր թվին՝ արտահայտված տոկոսով	11.2	11.2	0	
Ծնողների բավարարվածությունը մարզական խմբակներից	բավ	բավ		

«Ազատ ոճի ըմբշամարտի մանկապատանեկան մարզադպրոց» և «Սամբո-ձյուդոյի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ների շենքերի վերանորոգում (ֆինանսավորումը՝ արտահայտված հազար ՀՀ դրամով)	1370	900	–470	Վերանորոգման աշխատանքների ծավալի կրճատման պատճառով:
«Աթլետիկայի մանկապատանեկան մարզա-դրպրոց», «Հրաձգության մանկապատանեկան մարզադպրոց» ,«Պարի և սպորտային պարերի մանկապատանեկան մարզադպրոց» և «Յուրի Վարդանյանի անվ. ծանրամարտի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ների գործունեության ապահովում (ֆինանսավորումը՝ արտահայտված հազար ՀՀ դրամով)	4850	6782.03	+1932.03	Աշխատանքների ընթացքում հավելյալ աշխատանքների առաջացման պատճառով:
«Ալեքսան Հակոբյանի անվան թենիսի և սեղանի թենիսի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ի աշխատանքների բարելավում (ֆինանսավորումը՝ արտահայտված հազար ՀՀ դրամով)	350	0	-350	Նախագծային աշխատանքների ուշացման պատճառով գումար չի հատկացվել:
«Արամ Սարգսյանի անվան խաղերի մանկա-պատանեկան մարզադպրոց» և «Համալիր մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ների ջեռուցման և ջերմամեկուսացման համակարգերի ստեղծում (ֆինանսավորումը՝ արտահայտված հազար ՀՀ դրամով)	1270	2043.02	+773	Աշխատանքների ընթացքում հավելյալ աշխատանքների առաջացման պատճառով:
«Արթուր Ալեքսանյանի անվան հունահռոմեական ըմբշամարտի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ի մարզադահլիճի վերանորոգում (ֆինանսավորումը՝ արտահայտված հազար ՀՀ դրամով)	750	0	-750	Սուբվենցիոն ծրագրի մեջ ընդգրկված էր, բայց ծրագիրը չեղարկվեց:
«Բռնցքամարտի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ի մարզաբազաների վերանորոգում, գույքի ձեռքբերում (ֆինանսավորումը՝ արտահայտված հազար ՀՀ դրամով)	850	0	-850	Սուբվենցիոն ծրագրի մեջ ընդգրկված էր, բայց ծրագիրը չեղարկվեց:
«Մարմանամարզական մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ի շենքի ընթացիկ նորոգում, գույքի ձեռքբերում (ֆինանսավորումը՝ արտահայտված հազար ՀՀ դրամով)	850	0	-850	Սուբվենցիոն ծրագրի մեջ է ընդգրկված, ընթանում են նախագծահաշվարկային աշխատանքները:
«Շախմատի մանկապատանեկան» և «Տիգրան Պետրոսյանի անվան շախմատի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ների շենքերի մասնակի նորոգում մարզագույքի ձեռքբերում (ֆինանսավորումը՝ արտահայտված հազար ՀՀ դրամով)	1100	1164	+64	Նորոգման աշխատանքների ընթացքում հավելյալ աշխատանքների առաջացման պատճառով:

«Ջրային մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ի մարզաբազայի նորոգում (ֆինանսավորումը՝ արտահայտված հազար ՀՀ դրամով)	1100	700	–400	Նորոգման աշխատանքների ծավալի կրճատման պատճառով:
ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՒՄ, ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ ԵՎ ԿԱՆԱՉԱՊԱՏՈՒՄ, ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՈՒՄ, ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳԵՐԵԶՄԱՆԱՏՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ				
Համայնքի գլխավոր հատակագծի առկայություն	առկա	առկա		
Պատմամշակութային հուշարձանների վերականգնում	10	8	-2	Փաստացի շինարարական թույլտվությունների դիմաց դիմումների պատճառով:
Բարվոք վիճակում գտնվող բազմաբնակարանային շենքերի հարաբերությունը համայնքի բազմաբնակարանային շենքերի ընդհանուր թվին՝ արտահայտված տոկոսով	28	27	+1	Սուբվենցիոն ծրագրի շրջանակում շենքերի էներգաարդյունավետ արդիականացում:
Համայնքի բարեկարգ բակերի թվի հարաբերությունը բակերի ընդհանուր թվին՝ արտահայտված տոկոսով	34	40	+6	Հատկացումներ են իրականացվել բարեգործական կազմակերպության կողմից
Համայնքի ենթակայության տակ գտնվող ճանապարհների՝ ամեն տարի ասֆալտապատած հատվածի երկարության հարաբերությունը համայնքի ենթակայության տակ գտնվող ճանապարհների երկարությանը՝ արտահայտված տոկոսով	1.41	5.06	+3.65	Իրականացվել են սուբվենցիոն և համաշխարհային բանկի ծրագրերով ասֆալտապատման աշխատանքներ:
Համայնքում գլխավոր հատակագծին համապատասխան տրված շինարարական թույլտվությունների թվի հարաբերությունը տրված շինարարական թույլտվությունների ընդհանուր թվին՝ արտահայտված տոկոսով	203	203	0	
Համայնքում քաղաքաշինական կանոնադրության առկայություն	առկա	առկա		
Կառուցապատման թույլատրության մեջ նշված ժամկետների պահպանմամբ իրականացված շինարարությունների թվի հարաբերությունը համայնքում իրականացված շինարարությունների ընդհանուր թվին՝ արտահայտված տոկոսով	70	70	0	

Համատիրությունների կողմից սպասարկվող բազմաբնակարան շենքերի բնակ. մակերեսի հարաբերությունը համայնքում առկա բազմաբնակարան շենքերի բնակ. մակերեսին՝ արտահայտված տոկոսով	99,1	99.1	0	
Համայնքում հավաքված և աղբավայրերում տեղադրված աղբի հարաբերությունը համայնքում առաջացող ամբողջ աղբին՝ արտահայտված տոկոսով	97	97	0	
Համայնքի սանիտարական մաքրման ենթարկվող տարածքի մակերեսի հարաբերությունը համայնքի ընդհանուր տարածքի մակերեսին՝ արտահայտված տոկոսով	2.8	6.2		Փողոցների վերանորոգման և բարեկարգման արդյունքում համայնքի սանիտարական մաքրման ենթարկվող տարածքների ավելացում:
Համայնքի բնակիչների բավարարվածությունը աղբահանությունից և սանիտարական մաքրումից	լավ	լավ		
Համայնքի կանաչ տարածքների տարեկան աճ՝ արտահայտված տոկոսով	1.2	1.4	+0.2	ԷՅՓԹ բարեգործական կազմակեչպության նվիրատվության շնորհիվ
Գերեզմանատների ընդլայնում (հատկացվող հողամասերի մակերես՝ արտահայտված հեկտարով)	8.7	8.7	0	
ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ				
Համայնքի բնակիչների բավարարվածությունը համայնքը սպասարկող հասարակական տրանսպորտի աշխատանքներից	բավ	լավ		
Համայնքային ենթակայության ճանապարհներին տեղադրված ճանապարհային նշանների թվի հարաբերությունն անհրաժեշտ ճանապարհային նշաններին՝ արտահայտված տոկոսով	95,94	95,94	0	
Համայնքում կահավորված ավտոբուսային կանգառների հարաբերությունը ավտոբուսային կանգառների ընդհանուր թվին՝ արտահայտված տոկոսներով	95,94	77.02	-18.92	«ՏՌԻՊԼ ՍԻ» ՍՊԸ –ի կողմից կանգառների տեղեդրման ժամանակացույցի շեղման պատճառով:
Համայնքը սպասարկող հասարակական տրանսպորտի պարկում 5 և ավելի տարի հնություն ունեցող մեքենաների հարաբերությունն ավտոպարկի մեքենաների ընդհանուր թվին՝ արտահայտված տոկոսով	0	20.98	+20.98	Սուբվենցիոն ծրագրի շրջանակներում ձեռք բերված ավտոբուսների քիչ թվաքանակով ներմուծում:

ՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ				
Ռազմական գործողությունների մասնակիցներին և նրանց ընտանիքներին աջակցության ցուցաբերում (հազար դրամ)	40.7	12.76	-27.94	Փաստացի զինկոմիսարիատի կողմից տրամադրած ցուցակների և հանձնաժողովների աշխատանքների արդյունքում:
ՀԱՄԱՅՆՔԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ				
Համայնքի միջոցներով կազմակերպված ծրագրերի և միջոցառումների քանակ	20	20	0	
ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿՅԱՆՔԻՆ ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՈՒՄ				
Հաշմանդամություն ունեցող անձանց հասարակական կյանքին ինտեգրվելուն միտված ծրագրերի իրականացում (միջոցառումների թիվ)	2	2	0	
ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՈՒՄ՝ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ԿՐԹԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ, ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ, ՄԱՐԶԱԿԱՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ, ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԴՐԱՆՑ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ				
Համայնքապետարանի հետ համատեղ բարեգործական ծրագրերի իրագործում (միջոցառումների թիվ)	10	10	0	